



ARK ECOLOGICAL NGO

4/4 CHARENTS STREET
KAPAN, ARMENIA
PHONE: +374 98887894
E-MAIL: ARKARMENIA@GMAIL.COM

ARK BRIDGE ՇՐՄԱԳԻՐ՝ Արշավային արահետ Տաթևից Կապան

Սյունիքը Հայաստանի ամենահարավային մարզն է, որը սահմանակից է Իրանին : Այստեղ են գտնվում Հայաստանի ամենամեծ անտառները, որոնք հայտնի են կենդանական և բուսական աշխարհի էնդեմիկ տեսակների զարմանալի բազմազանությամբ: Սյունիքում է գտնվում նաև Հայաստանի ամենահայտնի տեսարժան վայրերից մեկը՝ [Տաթևի վանքը](#): Սյունիքը ունի իր ուրույն դերը հայոց պատմության մեջ:

Այդուհանդերձ, չնայած այս ամենին, վիճակագրությունը բարձրաձայն և հստակ փաստում է, որ **Սյունիքի մեծ մասը անտեսված է ժամանակակից զբոսաշրջիկների կողմից**: Բազմաթիվ պատճառներով, որտեղ վերջին տեղը չի զբաղեցնում թերզարգացած ենթակառուցվածքը՝ 2015-ին Հայաստան այցելած մեկ միլիոն զբոսաշրջիկներից Կապան այցելել է ոչ և՛ 1 %-ը:

Հազարավոր զբոսաշրջիկներ յուրաքանչյուր տարի չեն ծանոթանում Հայաստանի պատմության, մշակույթի և բնության հետ: Սակայն, ավելի կարևոր է այն, որ Սյունիքի շատ համայնքներ չեն ստանում այն պոտենցիալ տնտեսական օգուտը , որ բերում է զբոսաշրջությունը:

[ԱՐԿ բնապահպանակն](#) ՀԿ-ն՝ հիմնված Սյունիքի մարզկենտրոն Կապանում, հավատարիմ է այն գաղափարին, որ ժամանակակից զբոսաշրջության ենթակառուցվածքը պետք է համատեղվի բնության պահպանության հետ: Մենք հավատում ենք, որ էկոտուրիզմի խթանումը կբերի այն իրավիճակին, որ **զբոսաշրջիկները վայելելով Հայաստանի բերրի հողի բարիքները և հարուստ մշակութային ժառանգությունը՝ կնպաստեն նրա տնտեսական կայուն զարգացմանը**:

Սա է պատճառը, որ մենք միջոցներ ենք հավաքում, որպեսզի նշենք և քարտեզագրենք զբոսաշրջային արահետների ցանցը, որը կգրավի արկածասեր ժամանակակից զբոսաշրջիկներին հայտնաբերել Սյունիքի բնական և մշակութային արժեքները: Արշավային ճանապարհը կկապի Տաթևի վանքը Կապանի և Շիկահող Ազգային արգելոցի հետ: Այս ճանապարհին կլինեն 3 [էկո տուրիստական ճամբարներ](#), որոնցից առաջինը կառուցված է Կապանից ոչ հեռու, երկրորդը պլանավորվում է ստեղծել այս բազմաֆինանսավորումից հավաքված միջոցներով, իսկ երրորդը կկառուցի ԱՐԿ-ի գործընկերների միջոցներով Տանձավեր գյուղում: Ճանապարհի երկայնքով կդրվեն նաև ցուցանակներ, որոնք կոգնեն զբոսաշրջիկներին շարժվել ճիշտ ուղղությամբ: Անհրաժեշտության դեպքում, զբոսաշրջիկները կարող են դիմել ԱՐԿ-ի տեղեկատվական ծառայությանը զանգահարելով տեղեկատվական կենտրոն:



ARK ECOLOGICAL NGO

4/4 CHARENTS STREET
KAPAN, ARMENIA
PHONE: +374 98887894
E-MAIL: ARKARMENIA@GMAIL.COM

Հուսով ենք ձեզ հետաքրքրեց մեր ծրագիրը:

Մենք չենք խնդրում անհնարինը: Կլինի դա \$ 5 թե \$ 50, կամ թե դուք կտարածեք տեղեկատվություն մեր ծրագրի մասին սոցիալական ցանցերում՝ ցույց տալով ձեր աջակցությունը, այս ամենը շատ կարևոր է մեզ համար: Հուսով ենք՝ ձեզ կվոզևորի այն, ինչին մենք հասել ենք սահմանափակ միջոցներով, բայց ամբողջ աշխարհից մեզ մոտ եկած կամավորների օգնության շնորհիվ: Հիանալի է թե ինչ մեծ արդյունքների կարելի է հասնել **փոքր, աննշան քայլերի միջոցով**: Այժմ մենք հրավիրում ենք ձեզ դառնալ մեր ծրագրի մի մասը և աջակցել մեզ ձեր հնարավորությունների սահմաններում: Դուք կարող եք օգնել ծրագրի իրականացմանը ձեր դրամային ներդրումով, կամ կամավորական օգնությամբ:

Հավելյալ տեղեկություններ

Տաթևից Կապան և Շիկահող տուրիստական արահետների միջոցով «կամուրջ» ստեղծելը մեծ նախագիծ է, որը բաղկացած է մի քանի բաղադրիչներից՝ որ ուրախությամբ կներկայացնենք ձեզ ստորև՝

Արահետների ցանց՝

Առաջարկվող արշավային արահետների ցանցը, որը կկապի Տաթևը Կապանի մոտակայքում գտնվող ԱՐԿ-ի գործող էկո - ճամբարի հետ՝ կլինի ~ 45 կմ երկարությամբ: Ճանապարհը կարելի է անցնել ոտքով 3 օրվա ընթացքում, և այն կլինի նաև հասանելի հեծանվորդների համար: Ուղեցույցները կտեղադրվեն 5կմ պարբերականությամբ, նշելով ճանապարհի ուղղությունը, ինչպես նաև զբոսաշրջիկների համար կարևոր տեղեկություններ, ինչպիսին են օրինակ՝ աղբյուրները, կացարանները և այլն : Արահետների ցանցը կկապի հետևյալ տեղանքները:

1. **Տաթևի վանք**՝ Տաթևը 9- րդ դարի վանական համալիր է, որը 14-րդ -15 եղել է կարևոր մշակութային և գիտական կենտրոն: Ի հավելումն իր հնագույն ժառանգությանը, այն այժմ էլ կարևոր դեր է խաղում ժամանակակից Հայաստանի մշակութային կյանքում: 2010 թ.կառուցվեց Տաթևից Հալիձոր գյուղ տանող ճոպանուղին, որը գրանցվել է Գինեսի ռեկորդների գրքում, որպես աշխարհի « ամենաերկար ճոպանուղին», և ապահովում է զբոսաշրջիկների կայուն հոսք՝ պիկ սեզոնին մինչև օրը 1200 զբոսաշրջիկ: Դա ուշագրավ թիվ է, հատկապես Հայաստանի հարավային շրջանների համար:

2. **Կապանը** Սյունիքի մայրաքաղաքն է, որը ունի հարուստ մշակութային և պատմական ժառանգություն: Խորհրդային տարիներին այն դարձավ նաև կարևոր արդյունաբերական կենտրոն, որի վկայությունը հստակ տեսանելի է այսօր:



ARK ECOLOGICAL NGO

4/4 CHARENTS STREET
KAPAN, ARMENIA
PHONE: +374 98887894
E-MAIL: ARKARMENIA@GMAIL.COM

Կապանի շրջակայքը ունի լանդշաֆտի, կենդանական և բուսական աշխարհի յուրահատուկ բազմազանություն և ժամանակն է ցուցադրել այն աշխարհի:

3. **Շիկահողի պետական արգելոցը** Հայաստանի երկրորդ ամենամեծ արգելոցն է: Շիկահողը Հայաստանի այն յուրահատուկ վայրերից մեկն է, որտեղ անտառը մնում է անփոփոխ: Այստեղ կա նաև 1100 բուսատեսակ , որից 70-ը գրանցված են Կարմիր գրքում: Շիկահողի կենդանական աշխարհը ներառում է այնպիսի հազվագյուտ տեսակի կենդանիներ, ինչպիսիք են ընձառյուծը, բեզուարյան այծը, արջը, անգղը, իժը և ոզնին, դարձնելով Շիկահողը այն ուղղությունը, որ յուրաքանչյուր զբոսաժրջիկ պետք է ներառի իրեն երթուղում:

Տաթև-Կապան ճանապարհը կկապվի ԱՐԿ-ի [գործող արշավային արահետների ցանցի](#) հետ, որը թույլ կտա զբոսաշրջիկներին այցելել մի շարք հետաքրքիր տեսարժան վայրեր և վայելել օգտակար և հաճելի ժամանց:

Տեղեկատվական աջակցության համակարգ`

Ճանապարհի երկայնքով յուրաքանչյուր գյուղում նաև կտեղադրվեն ցուցանակներ: Ցուցանակները ոչ միայն կտրամադրեն հիմնական տեղեկատվություն յուրաքանչյուր վայրի և դրա պատմության մասին, այլև անմիջական կապ կստեղծեն տեղի բնակիչների և զբոսաշրջիկների միջև, ուղղորդելով վերջիններին դեպի նրանց, ովքեր առաջարկում են ապրանքներ և ծառայություններ: Ցուցանակներում կլինեն նաև ԱՐԿ-ի կոնտակտները, անհրաժեշտության դեպքում զբոսաշրջիկներին լեզվական աջակցություն տրամադրելու համար: . Տաթևի վանքի հարևանությամբ կտեղադրվի տեղեկատվական ցուցանակ, որը կտեղեկացնի զբոսաշրջիկներին զբոսաշրջային արահետների և քեմպինգների մասին ինֆորմացիա, ինչես նաև կպարունակի ԱՐԿ-ի կոնտակտները:

Էկոճամբարներ` [Առաջին Էկոճամբարը](#) ստեղծվել է Կապանից ոչ հեռու, երկրորդը կստեղծվի Առաջաձոր գյուղում: Այն կտրամադրի զբոսաշրջիկներին հարմարավետ, մատչելի կացարան գյուղական վայրում, որտեղից բացվում է հիասքանչ տեսարան: Պերմակուլտուրային այգիներում ստեղծված այս ճամբարները ոչ միայն կառաջարկեն զբոսաշրջիկներին օրգանական սնունդ, այլև կհանդիսանան ցուցադրական նմուշներ մոտակա համայնքների բնակիչների համար: Առաջաձորում այգին արդեն ԱՐԿ-ի տրամադրության տակ է և պատրաստ է ճամբարի կառուցման աշխատանքներին: Ջուրը և էլեկտրականությունը արեն քաշված են: Այստեղ կլինեն 5 ծածքեր տեռասների վրա` վրանների համար, որոնք կպաշտպանեն զբոսաշրջիկներին ամառվա շոգից և աշնանային անձրևներից: Տեռասում կլինեն նաև հարմարավետ խոհանոց և ժամանակակից զուգարան:



ARK ECOLOGICAL NGO

4/4 CHARENTS STREET
KAPAN, ARMENIA
PHONE: +374 98887894
E-MAIL: ARKARMENIA@GMAIL.COM

Տանձավեր գյուղում ԱՐԿ-ը առայժմ կարող է առաջարկել գյուղից ոչ հեռու գտնվող հանգստյան գոտին՝ որպես հանգրվան, որտեղ կա տեղ վրանների համար, հոսող ջուր, սեղան և կրակատեղ: Մինչդեռ մենք ունենք պայմանավորվածություն Տանձավերում բնակվող մեր գործըկերոջ հետ, ով կստեղծի այնտեղ հիմնական քեմպինգ:

Ժամանակացույց`

Մենք պլանավորում ենք ավարտել ցուցանակների տեղադրումը և Առաջածորի քեմպի ստեղծումը 2017-ի գարնանը, որպեսզի կարողանանք էկոզբոսաշրջիկներ բերել այս տարածաշրջան, որը շատ ունի նրանց կարիքը: Այդ նշանակում է, որ մենք պետք է սկսենք միջոցներ հավաքել մեր ծրագրի համար հենց հիմա: Ձեր նվիրատված յուրաքանչյուր դոլարը անմիջապես կծախսվի ծրագրի իրականացման վրա, և մենք պատրաստ ենք հաշվետվություն տալ ձեզ ծրագրի իրականացման յուրաքանչյուր փուլի մասին: Մինչև հիմա ԱՐԿ-ը իրականացրել է իր աշխատանքները սեփական միջոցների, նվիրատվությունների և կամավորների քրտնաջան աշխատանքի շնորհիվ: Մենք հպարտ ենք [այն արդյունքներով](#), որոնց հասել ենք ունենալով չափազանց սուղ միջոցներ: Դուք կարող եք համոզված լինել, որ այս ծրագրի բյուջեն՝ \$4000, նախագծվել է չափազանց մանրակրկիտ և ընդգրկում է միայն անհրաժեշտ ծախսերը:

[Ներբեռներ մեր բյուջեն այստեղ`](#)

ԱՐԿ Բնապահպանական ՀԿ-ի մասին`

ԱՐԿ-ը [Կապանում](#) տեղակայված բնապահպանական հասարակական կազմակերպություն է, որի գործունեությունը ուղղված է տարածաշրջանում կայուն զարգացման ծրագրերի իրականացմանը, որոնք նպաստում են տարածաշրջանի սոցիալական, տնտեսական, բնապահպանական զարգացմանը: Մեր թիմը հիմնականում բաղկացած է կամավորներից, որոնք որոնք աշխատում են մեր հայրենքի հիասկանչ բնությունը աշխարհին բացահայտելու նպատակի իրականացման համար: Մենք տրամադրում ենք քեմպինգ և ինֆորմացիոն տեղկատվություն զբոսաշրջիկներին և ճանապարհորդներին: Մենք նաև հյուրնկալում ենք կամավորների, որոնք կիսում են մեր նպատակները: Այցելեք մեր [կայքէջ](#) մանրամասներին ծանոթանալու համար:

Լրացուցիչ ինֆորմացիա

ARK Bridge ծրագիրը, որի նպատակն է միացնել Սյունիքի հարավում գտնվող Զանգեզուրի Բիոսֆերային արգելոցը Հայաստանի հարավի ամենահայտնի զբոսաշրջային ուղղության՝ Տաթևի վանքի հետ արշավային արահետների ցանցի, երեք էկո ճամբարների և զբոսաշրջության տեղեկատվական



ARK ECOLOGICAL NGO

4/4 CHARENTS STREET

KAPAN, ARMENIA

PHONE: +374 98887894

E-MAIL: ARKARMENIA@GMAIL.COM

աջակցության համակարգի միջոցով: Էկո և ագրո տուրիստները, ինչպես նաև տեղական համայնքները կօգտվեն այս ծրագրի արդյունքներից: Առաջինները հնարավորություն կստանան բացահայտել իրենց համար տարածաշրջանի հեքիաթային բնությունը, վերջինները կստանան եկամտուտի միջոց, առաջարկելով իրենց ապրանքները և ծառայությունները: Այս ծրագրի շրջանայնեում 2015-ին ԱԸԿ-ը կառուցե է իր առաջին Էկո ճամբարը և ստեղծել տարածաշրջանում առաջին զբոսաշրջային արահետների ցանցը: